

ՄՀԵՐ ՄԱՍԱԶԱՆՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և
մուսիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՄԻՎՈՐՎԵԼՈՒ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Միավորման իրավունքը մարդու՝ համատեղիակական նշանակության հիմնարար իրավունքն է: Միավորման իրավունքը սահմանող սահմանադրական նորմերը լայն հեռանկարներ են բացում մարդկային գործունեության տարբեր նպատակների իրացման համար¹: Հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում և իրավական պետությունում միավորման իրավունքի նշանակությունը՝ այն պետք է ապահովել սահմանադրական երաշխիքներով: Միավորվելու իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28-րդ հոդվածում, համաձայն որի՝

«Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:

Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ կուսակցության կամ միավորման:

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունում միավորվելու իրավունքն ամրագրված է 30-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի միավորման իրավունք, այդ թվում՝ ստեղծելու արհեստակցական միություններ իրենց շահերը պաշտպանելու համար:

Ոչ ոք չի կարող ստիպված անդամագրվել որևէ միավորման կամ մնալ այնտեղ»:

ՀՀ Սահմանադրությունում ամրագրված միավորման իրավունքը երաշխավորված է նաև մի շարք ՀՀ օրենքներով, մասնավորապես 2001 թվականին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին», 2002 թվականին ընդունված «Կուսակցությունների մասին», 2000 թվականին ընդունված «Արհեստակցական միությունների մասին» և մի շարք այլ օրենքներով: Ռ-Ռ Սահմա-

նադրությունում ամրագրված միավորման իրավունքը երաշխավորված է նաև մի շարք Ռ-Ռ դաշնային օրենքներով, մասնավորապես, 1995 թվականին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին», 2001 թվականին ընդունված «Քաղաքական կուսակցությունների մասին», 1995 թվականին ընդունված «Արհեստակցական միությունների և նրանց գործունեության իրավունքների և երաշխիքների մասին» և մի շարք այլ դաշնային օրենքներով:

Այսպիսով, թե՛ ՀՀ Սահմանադրությունը, թե՛ Ռ-Ռ Սահմանադրությունը և թե՛ երկու երկրների գործող օրենսդրությունները երաշխավորում են յուրաքանչյուրի միավորվելու իրավունքը: Սակայն ոչ սահմանադիրը, ոչ օրենսդիրը և ոչ էլ իրավակիրառողն այն հարցի պատասխանը, թե ինչ է միավորումը, չեն տալիս: Ուստի, այս եզրույթի ստուգաբանության համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ բառարաններին: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում միավորումը սահմանվում է որպես միություն, կազմակերպություն²: Միավորումը նույն կերպ է բացատրվում նաև Մ.Ի.Օժոգովի բառարանում³: Ֆ.Ա.Բռնկիստովի և Ի.Ա.Եֆրոնովի հանրագիտարանային բառարանում միավորումը սահմանվում է որպես ընդհանուր նպատակով մի քանի անձանց միություն⁴:

Ռուսական իրավաբանական գրականությունում տարածված է այն տեսակետը, որ միավորումն իրենից ներկայացնում է անհատական և կոլեկտիվ գործողությունների արդյունք⁵: Միավորում եզրույթը սահմանվում է նաև որպես գործընթաց, որն իր մեջ ներառում է միավորում ստեղծելուց մինչև նրա գործունեության դադարեցումը: Երկրորդ մոտեցումը լայն տարածում է ստացել միջազգային դատական ատյանների պրակտիկայում, մասնավորապես Եվրոպական դատարանը նշում է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված միավորման իրավունքը տեսական, երևակայական կլինի. եթե իր մեջ ներառի միայն միավորում ստեղծելու իրավունքը և ազգային իշխանությունը հնարավորություն ունենա դադարեցնելու միավորման գործունեությունը՝ չպահպանելով Կոնվենցիայի պահանջները⁶: Սրանից հետևում է, որ Կոնվենցիայի պաշտպանությունը տարածվում է միավորման ողջ գործընթացի վրա: Այսինքն, այս տեսակետի համաձայն միավորումն իրենից ներկայացնում է գործընթաց, որն իր մեջ ներառում է միավորում ստեղծելուց մինչև միավորման գործունեության դադարեցումը

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նախատեսող բոլոր փուլերը:

Մենք համաձայն ենք միաժամանակ այս երկու մոտեցումների հետ էլ, քանի որ կարծում ենք, որ այս մոտեցումները միավորում իրավաբանական եզրույթը բնութագրում են երկու տարբեր կողմերից և մեկի ընդունումը չի ենթադրում մեխանիկորեն մյուսի բացառում: Հօգուտ մեր մոտեցման է խոսում նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Եվրոպական դատարանը մի շարք գործերում միավորմանն անդրադարձել է որպես երկարաժամկետ գործընթացի⁷, իսկ մյուս դեպքերում՝ որպես ընդհանուր նպատակով անձանց կամավոր միավորման (կազմակերպության)⁸: Մեր կարծիքով, միավորումը հանդիսանում է առաջինը՝ որպես անձանց որոշակի վարքագծի արդյունք, որն ընդհանուր նպատակով մի քանի անձանց կողմից սահմանված միություն (կազմակերպություն) է, երկրորդը՝ միավորումը գործընթաց է, որն իր մեջ ներառում է միավորում ստեղծելուց մինչև նրա գործունեության դադարեցումը:

Սակայն վերոնշյալի հետ միաժամանակ ակնհայտ է, որ ցանկացած միավորում չէ, որ հանդիսանում է ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ: Գոյություն ունեն բազմաթիվ միավորումներ, որոնք չեն գտնվում միավորման իրավունքի օբյեկտի շրջանակներում, օրինակ՝ պետությունների միավորումները: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ միավորման իրավունքի օբյեկտ չեն հանդիսանում նաև հանրային իրավունքի միավորումները⁹: Այսպիսով, կարելի է առանձնացնել միավորման երկու տեսակ՝ միավորումներ, որոնք ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ են, և միավորումներ, որոնք միավորման իրավունքի օբյեկտ չեն:

Որպեսզի որևէ միավորում միավորման իրավունքի օբյեկտ հանդիսանա, անհրաժեշտ է, որ նա ունենա որոշակի հատկանիշներ: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի իմաստով միավորում դիտարկելու համար Եվրոպական դատարանն օգտագործում է միավորման կամավոր բնույթի և ընդհանուր նպատակի չափանիշները: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, միավորումը կրում է առավել ձևական կազմակերպված բնույթ¹⁰ և միավորումը նախատեսում է ընդհանուր նպատակով անձանց կամավոր միավորում¹¹:

Կարծում ենք, որպեսզի որևէ միավորում ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ հանդիսանա անհրաժեշտ է, որ նա ունենա հետևյալ հատկանիշները՝

1. մի քանի միավորվող սուբյեկտների առկայություն,
2. միավորման կամավորություն,
3. նպատակի ընդհանրություն,
4. որոշակի, ներքին կազմակերպչական կապերի առկայություն:

Սակայն հարց է առաջանում՝ արդյո՞ք ՀՀ և ՌԴ սահմանադրությունները երաշխավորում են տվյալ հատկանիշներ ունեցող ցանկացած միավորումում միավորվելու իրավունքը, թե՞ միայն սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով

նախատեսված միավորումների ձևերում միավորվելու իրավունքը, և արդյո՞ք ՀՀ և ՌԴ սահմանադրությունները երաշխավորում են առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում (միավորումներում) միավորվելու իրավունքը, թե՞ միայն ոչ առևտրային կազմակերպություններում միավորվելու իրավունքը:

Միավորումներին անդրադառնալիս թե՛ ՀՀ Սահմանադրության, թե՛ ՌԴ Սահմանադրության տարբեր հոդվածներում օգտագործված են տարբեր ձևակերպումներ: ՀՀ Սահմանադրությունում այս իրավունքի հետ կապված օգտագործվում են «կուսակցություններ», «կրոնական կազմակերպություններ», «միավորումներ», «արհեստակցական միություններ», «հասարակական միավորումներ» հասկացությունները: ՌԴ Սահմանադրությունն այս իրավունքի համար օգտագործում է «միավորում», «հասարակական միավորում», «քաղաքացիների միավորում», «կրոնական միավորում», «արհեստակցական միություններ» ձևակերպումները և այլն:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ միավորման իրավունքի անմիջական և միակ արտահայտությունը սահմանադրությունում կամ օրենսդրությունում նշված միավորումների ձևերն են: Երկար ժամանակ ուսումնական և մենագրական գրականության մեջ գերիշխում էր այն կարծիքը, որ միավորման իրավունքի իրացումը հնարավոր է միայն «Հասարակական միավորումների մասին» ՌԴ օրենքի և այլ՝ հասարակական միավորումներին վերաբերվող օրենքների շրջանակներում թվարկված ձևերում¹²: Սակայն մենք կարծում ենք, որ միավորման իրավունքի օբյեկտը «ցանկացած միավորումն» է և միավորումն ընդհանրապես, և ոչ թե ՀՀ և ՌԴ սահմանադրությունների և համապատասխան օրենքներում նախատեսված միավորման տարբեր ձևերը: Այդպիսի եզրահանգում կարելի է անել ՀՀ Սահմանադրության և ՌԴ Սահմանադրության միավորման իրավունքին նվիրված հոդվածների վերլուծությունից:

ՌԴ Սահմանադրության 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համեմատական վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ սահմանադիրը սահմանում է միավորման իրավունքի դրական և բացասական բովանդակությունը: Զննարկվող իրավունքի դրական ձևակերպումն է՝ «Յուրաքանչյուր ոք ունի միավորման իրավունք, այդ թվում՝ ստեղծելու արհեստակցական միություններ՝ իրենց շահերը պաշտպանելու համար»: ՌԴ Սահմանադրության 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ուղղակիորեն չսահմանելով միավորման իրավունքի օբյեկտը, միայն մատնացույց են անում անձի միավորվելու հնարավորությունը և միայն մեկ հնարավոր ձևերից մեկում արհեստակցական միություններում միավորման հնարավորությունը: Միավորման իրավունքի բացասական ձևակերպումն է՝ «Ոչ ոք չի կարող հարկադրաբար անդամագրվել որևէ միավորման կամ մնալ այնտեղ», այս ձևակերպումը պարունակում է միավորման իրավունքի օբյեկտը, ինչը ցանկացած միավորումն է ընդհանրապես:

Ի տարբերության ՌԴ Սահմանադրության, ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին մասում սահմանադիրը միավորման դրական իրավունքը սահմանելիս նշել է, որ յուրաքանչյուր ոք ունի այլ

անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում նաև արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասում միավորման բացասական իրավունքը սահմանել է, որ մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ կուսակցության կամ միավորման: Այսպիսով, ՀՀ սահմանադիրը, ի տարբերություն ՌԴ սահմանադրի, միավորման թե՛ դրական, թե՛ բացասական իրավունքները սահմանելիս, միավորման իրավունքի օբյեկտ է համարում որևէ միավորում կամ ցանկանցած միավորում և ոչ թե միավորման որոշ ձևեր: ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորվում է յուրաքանչյուրի իրավունքը միավորվելու ցանկացած միավորումում, այլ ոչ թե միայն սահմանադրության մեջ նշված և համապատասխան օրենքներով նախատեսված միավորման առանձին ձևերում միավորվելու իրավունքը:

Հաջորդ կարևոր խնդիրն այն է՝ արդյո՞ք ՀՀ և ՌԴ սահմանադրություններով նախատեսված միավորվելու իրավունքը վերաբերում է և՛ առևտրային, և՛ ոչ առևտրային կազմակերպություններին, թե՛ միայն վերջիններին:

Առևտրային կազմակերպությունները ոչ առևտրայիններից տարբերվում են միայն նրանց նպատակով: Առևտրային կազմակերպությունների դեպքում նպատակը շահույթ ստանալն է: Ինչպես արդեն նշել ենք, միավորման հատկանիշներն են՝

1. մի քանի միավորվող սուբյեկտների առկայությունը,
2. միավորման կամավորությունը,
3. նպատակի ընդհանրությունը,
4. որոշակի ներքին կազմակերպչական կապերի և ֆորմալ ընթացակարգերի առկայությունը:

Կարծում ենք՝ որևէ հիմք չկա սահմանադրությանը երաշխավորված միավորվելու իրավունքը սահմանափակել միայն ոչ առևտրային կազմակերպություններով, քանի որ առևտրային կազմակերպությունները նույնպես համապատասխանում են միավորմանը ներկայացված պահանջներին:

Նախ վերոնշյալով օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ եթե ՀՀ և ՌԴ սահմանադիրները ցանկանային միավորման իրավունքը սահմանափակել միայն ոչ առևտրային կազմակերպություններով, ապա սահմանադրություններում կերաշխավորվեր ոչ թե միավորումներում միավորվելու իրավունքն առհասարակ, այլ ոչ առևտրային կազմակերպություններում կամ շահույթ չհետապնդող միավորումներում միավորվելու իրավունքը, ինչպես մի շարք երկրների սահմանադրություններում: Օրինակ՝ Հունաստանի Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն. «Հույներն իրավունք ունեն ստեղծել շահույթ ստանալու նպատակ չունեցող միավորումներ և հասարակական կազմակերպություններ՝ պահպանելով օրենքները, որոնք երբեք չեն կարող այդ իրավունքի իրականացումը պայմանավորել նախնական թույլատվություն ստանալու պայմանով»: ԵՎ երկրորդ ՌԴ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում¹³ նշել է, որ ընկերակցությունները, սահմանափակ պատասխանատվության ընկերությունները, բաժնետիրական ընկերություններն իրենց էությանը հանդիսանում են անձանց միավորումներ: Այսինքն, միավորվելու սահմանադրական իրավունքը երաշխավորում է յուրաքանչյուրի միավորվելու իրավունքն անկախ

այն հանգամանքից՝ անհատը հետապնդում է շահույթ ստանալու նպատակ, թե՛ ոչ:

Այսպիսով, ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորվելու իրավունքը վերաբերում է նաև առևտրային կազմակերպություններին: Սակայն անհրաժեշտ է նշել, որ առևտրային կազմակերպությունը, հանդիսանալով իրավաբանական անձ, չի հանդիսանում միաժամանակ անպայման միավորում: Առևտրային կազմակերպություն (իրավաբանական անձ) լինելը դեռևս չի նշանակում, որ նա անպայման հանդիսանում է միավորում: Իրավաբանական անձի հատկանիշներից է համարվում նաև այն, որ նա կարող է միավորել մի քանի անձանց, սակայն դա ոչ միշտ է առկա: Հետևաբար, միավորում չի հանդիսանում այն առևտրային կազմակերպությունը, որը, հանդիսանալով իրավաբանական անձ, կազմված է միայն մեկ անդամից:

Այսպիսով, ոչ բոլոր իրավաբանական անձինք են հանդիսանում միավորում, կարծում ենք նաև, որ ոչ բոլոր միավորումներն պետք է անպայման իրավաբանական անձ հանդիսանան: Միավորման որպես իրավաբանական անձի կարգավիճակի առկայությունը կամ բացակայությունը հիմնականում կապված է նաև պետական գրանցման առկայությունը հետ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միավորումների պետական գրանցումն իրականացվում է կամավոր (Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Հունգարիա, Նիդերլանդներ և Լեհաստան)¹⁴: Միավորման հիմնադիրները կարող են գրանցել միավորումը՝ ձեռք բերելով իրավաբանական անձի կարգավիճակ, որն իր հերթին հնարավորություն է ընձեռում միավորմանը սեփականություն ունենալ, աշխատողներ վարձել, բանկային հաշիվներ բացել և միավորման անունին իրականացնել այլ ֆինանսական և իրավաբան նշանակություն ունեցող գործունեություն: Միավորումները պետական գրանցման իրավունք պետք է ունենան, որպեսզի ձեռք բերեն իրավաբանական անձի կարգավիճակ և օգտվեն դրա հետ կապված իրավական հնարավորություններից, սակայն պետական գրանցումը, բացառությամբ մի քանի միավորումների (օրինակ՝ քաղաքական կուսակցություններ) ձևերի, պետք է լիովին կախված լինի հիմնադիրների կամքից: Չգրանցված միավորումների զոյությունը ժողովրդավարական երկներում արգելված չէ, իսկ դրանց գործունեությունը սահմանափակված է միայն այն մասով, որը կապված է իրավաբանական անձի կարգավիճակի բացակայությամբ:

Այս իմաստով միավորվելու իրավունքը դա մարդու յուրօրինակ իրավունքն է: Այն մասնավոր անձին հնարավորություն է տալիս ստեղծել իրավունքի նոր սուբյեկտներ: Սակայն կարծում ենք, որ սահմանադրությամբ երաշխավորված միավորվելու իրավունքը նաև հնարավորություն է ստեղծել միավորում, որն իրավունքի սուբյեկտ չի հանդիսանում: Այստեղ խոսքը գնում է «ոչ ֆորմալ» միավորումների մասին:

Այսպիսով, անձանց կողմից ստեղծվող միավորումները կարող են լինել քաղաքական, բարեգործական, մարզական, կրոնական, ձեռնարկատիրական և այլն: Վերլուծելով միավորման իրավունքը որպես ուղղակի գործողության սահմանադրաիրավա-

կան կատեգորիա՝ կարելի է հետևություն անել, որ միավորման իրավունքի իրացման արդյունքում կարող են ստեղծվել.

Հայաստանի Հանրապետությունում «Հասարակական կազմակերպությունների մասին», «Կուսակցությունների մասին», «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքների հիման վրա ստեղծված միավորումներ, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված կրոնական միավորումներ, ձեռնարկատիրական միավորումներ, որոնք ստեղծվում են տարբեր օրենքների հիման վրա, օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ միավորումներ և օրենսդրությամբ չնախատեսված միավորումներ: Ռուսաստանի Դաշնությունում «Հասարակական միավորումների մասին», «Քաղաքական կուսակցությունների մասին», «Արհեստակցական միությունների և նրանց գործունեության իրավունքների և երաշխիքների մասին» ՌԴ օրենքների հիման վրա ստեղծված միավորումներ, «Խղճի ազատության և կրոնական միավորումների մասին» ՌԴ օրենքի հիման վրա ստեղծված կրոնական միավորումներ, ձեռնարկատիրական միավորումներ, որոնք ստեղծվում են տարբեր օրենքների հիման վրա, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված

այլ միավորումներ և օրենսդրությամբ չնախատեսված միավորումներ, ինչպես նաև օրենսդրությամբ չնախատեսված «ոչ ֆորմալ» միավորումներ:

Այսպիսով՝ 1. Գոյություն ունեն միավորումներ, որոնք սահմանադրությամբ երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ են, և միավորումներ, որոնք միավորման իրավունքի օբյեկտ չեն: ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտ են այն միավորումները, որոնք ունեն որոշակի հետևյալ հատկանիշները՝ ա) մի քանի միավորվող սուբյեկտների առկայություն, բ) միավորման կամավորություն, գ) նպատակի ընդհանրություն, դ) որոշակի ներքին կազմակերպչական կապերի առկայություն,

2. ՀՀ և ՌԴ սահմանադրություններով երաշխավորված միավորման իրավունքի օբյեկտը «ցանկացած միավորում» է, միավորում ընդհանրապես և ոչ թե ՀՀ և ՌԴ սահմանադրություններով և համապատասխան օրենքներով նախատեսված միավորման տարբեր ձևերը միայն,

3. ՀՀ և ՌԴ սահմանադրություններով նախատեսված միավորվելու իրավունքը վերաբերում է և՛ առևտրային, և՛ ոչ առևտրային կազմակերպություններին: Սակայն ոչ բոլոր առևտրային կազմակերպություններն (իրավաբանական անձինք) են հանդիսանում միավորում:

¹ St'u Алиев А.А. Защита права на объединение в Конституционном Суде РФ: Диссертация... к.ю.н. М. 2000. С.16.
² St'u Հայոց լեզվի բազմաթիվական բառարան. Հատոր 3. Երևան, 1974, էջ 534:
³ St'u Ожегов С.И. Словарь русского языка. М. 1973. С. 401.
⁴ St'u Брокгауз Ф.А. Ефрон И.А. Энциклопедический словарь. Т2. СПб, 1890. С.331.
⁵ St'u Моисеев А.М. Конституционное право граждан на объединение в политические партии и судебная практика его защиты: Диссертация... к.ю.н. М. 2008. С. 41.
⁶ St'u United Communist party of Turkey v. Turkey Judgment of 30 January 1998.
⁷ St'u նույն տեղում:
⁸ St'u Young, James and Webster v. The United Kingdom 13-08-1981.
⁹ St'u Le Compte, Van, Leuven, De Meyere v. Belgium, Judgment of 23 June 1981, Sigurdur A. Singurjonsson v. Iceland Judgment of 30 June 1993.
¹⁰ St'u Гомьен Д. Харрис Д. Зваак Л. Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия. Право и практика М. изд-во МНИМП. 1998. С. 395.
¹¹ St'u Young, James and Webster v. The United Kingdom 13-08-1981.
¹² St'u Права человека: Учебник для вузов/ Отв. ред чл.-корр.РАН д.ю.н. Е.А. Лукашева.М.Издательство Норма. 2003. С.158.
¹³ St'u Постановление Конституционного Суда РФ от 24.10.1996 г. N 17-П; Постановление Конституционного Суда РФ от 12.10.1998 г. N 24-П.
¹⁴ St'u <http://www.icnl.org/knowledge/ijnl/index.htm>.

РЕЗЮМЕ

Объект конституционного права на объединение в Республике Армения и Российской Федерации

Статья посвящена объекту конституционного права на объединение в Республике Армения и Российской Федерации. Автор в статье рассматривает термин “объединение” и его основные признаки. В статье в качестве объединений рассматриваются также и коммерческие организации, отмечая, что право на создание объединений, гарантированное Конституциями РФ и РА распространяется также и на коммерческие организации.

SUMMARY

The object of the constitutional right to freedom of association in the Republic of Armenia and the Russian Federation

The article is devoted to the object of the constitutional right to freedom of association in the Republic of Armenia and the Russian Federation. The author in the article reviews the term “association” and its main features. In this article commercial entities are considered to be associations, noting that the right to freedom of association guaranteed by the Constitutions of the Republic of Armenia and the Russian Federation refers to commercial entities as well.